

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2017թ. փետրվարի 8-ի նիստի /արձանագրություն N 10/

1. Հաստատել ԵԹԿՊԻ-ի մանդատային հանձնաժողովի որոշումը և հեռակա ֆակուլտետի վճարովի ուս. համակարգում սովորող ներքոհիշյալ ուսանողների 2016-2017 ուս. տարվա առաջին կիսամյակի ուսման վարձը զեղչել հետևյալ չափերով՝

- 1.1. Թորոսյան Լուսինե Արամի (կինոարվեստ II կուրս) – 50 %
- 1.2. Հովհաննիսյան Արսյոմ Հովհաննեսի (կինոարվեստ II կուրս) – 50 %
- 1.3. Ոսկանյան Սամվել Վալենտինի (կինոարվեստ III կուրս) – 50 %
- 1.4. Խաչատրյան Աստղիկ Կարենի (կինոարվեստ IV կուրս)– 40 %
- 1.5. Սարուխանյան Դավիթ Սարոյի (կինոարվեստ II կուրս) – 50 %

2. Նախապատրաստական դասընթացների բաժնում անցկացված ստուգարքների արդյունքների վերաբերյալ փորձագիտական հանձնաժողովի նախագահի զեկույցն ընդունել ի գիտություն,

2.1. նախապատրաստական դասընթացների բաժնում ուսուցման գործընթացը բարելավելու նպատակով հանձնարարել՝

2.1.1. մասնագիտական ամբիոններին՝ նախապատրաստական բաժնի համապատասխան դասընթացների համար մշակել ծրագրեր՝ ակնկալվող վերջնարդյունքների, լսարանային որոշակի ժամաքանակի և հանձնարարվող ինքնուրույն աշխատանքի հաշվառմամբ, ամրագրելով նաև դասավանդման եղանակը:

Ծրագրերը քննարկել և հաստատել ամբիոնի նիստում,

2.1.2. նախապատրաստական դասընթացների բաժնի վարիչ Ռ. Մարուխյանին՝

2.1.2.1. վերահսկել դասախոսների կողմից դասընթացների ծրագրերի կատարման ընթացքը, փորձագիտական հանձնաժողովի եզրակացության և դիտողությունների մասին տեղեկացնել դասավանդող դասախոսներին,

2.1.2.2. «Մշակութային գիտելիքներ» առարկայի համար կազմել առանձին ծրագրեր՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան թեմաների ընդգրկմամբ,

2.2. 2017-2018 ուս. տարվանից նախապատրաստական դասընթացների բաժնում ներքոհիշյալ դասընթացներին հատկացվող ժամաքանակը հաշվարկել սովորողների թվաքանակով՝ մեկ սովորողին՝ 0,25 ժամ հաշվարկով.

- Դերասանի վարպետություն 1(Էտյուդի պատրաստում)
- Դերասանի վարպետություն 2 (մենախոսության պատրաստում)
- Բեմական խոսք 1
- Կինոռեժիսուրա 1(սցենարի պատրաստում)
- Կինոռեժիսուրա 2 (գործնական պարապմունք)
- Սցենարի վարպետություն

2.3. արագացված դասընթացների դեպքում դասընթացներին հատկացվող ժամաքանակը հաշվարկել 1 սովորողին 0,5 ժամ հաշվարկով և ուսման վարձը գանձել ամբողջությամբ,

2.4. ս.թ. փետրվարի 13-ից նախապատրաստական դասընթացների բաժնում Կինոարվեստ մասնագիտության ծրագրով դասավանդվող Դերասանի վարպետություն 1 դասընթացին հատկացված շաբաթական 2 ժամը հանել Արմեն Դովլաթյանի ծանրաբեռնվածությունից և հատկացնել Դերասանի վարպետության և ռեժիսուրայի ամբիոնի դասախոս Գալինա Վլադիմիրի Մեսրոպյանին:

3. Երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ պրոռեկտոր Վ. Եղիազարյանի զեկույցն ընդունել ի գիտություն:

Հանձնարարել Վ. Եղիազարյանին վերահսկել լսարաններում անհրաժեշտ ջերմություն ապահովելու գործընթացը,

3.1. Հանձնարարել պրոռեկտոր Հ. Ավագյանին կազմակերպել և վերահսկել ԱՄՆ-ից և Մոսկվայի ԹԱՊԻ-ից ժամանող պատվիրակությունների հետ աշխատանքային ծրագրերի նախապատրաստման և իրականացման ընթացքը:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան